ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/160

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ
Մասնակից՝ «Պահապան 1» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՍՉԱՄ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, անվտանգության և պահնորդային ծառայությունների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՍՉԱՄ-ԳՀԾՁԲ-21/1»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 16.06.2021թ.-ի թիվ 26/26-1/9732-2021 գրությամբ «Պահապան 1» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի 09.06.2021թ. թիվ ՍՉԱՄ-634 գրության հիման վրա, 16.06.2021թ.-ին «Պահապան 1» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 16.06.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձը 16.06.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/160 համարի ծածկագիրը:

24.06.2021թ.-ին և 02.07.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 24.06.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 02.07.2021թ.-ին:

2. «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ն 09.06.2021թ. թիվ ՍՉԱՄ-634 գրությամբ, դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը, հայտնել է հետևյալը.

«Սույնով հայտնում եմ Ձեզ, որ «Պահապան 1» ՍՊԸ-ն պատշաճ չի իրականացրել վերջինիս և «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի միջև 2021 թվականի փետրվարի 26-ին կնքված անվտանգության և պահնորդային ծառայությունների մատուցման թիվ ՍՉԱՄ-ԳՀԾՁԲ-21/1 պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներին համապատասխան, ինչի արդյունքում «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի կողմից վերը նշված պայմանագիրը միակողմանի լուծվել է:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «Պահապան 1» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Բողոքներ քննող անձին 30.06.2021թ.-ին ներկայացված թիվ ՍՉԱՄ-704 գրությամբ «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ն հավելել է հետևյալը.

«Ձեր վարույթում գտնվող թիվ ՍՑ-ԼՕ-2021/160 ընթացակարգի շրջանակներում 18.06.2021 թ-ին «Պահապան 1» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից ներկայացված պնդումների վերաբերյալ ներկայացնում ենք մեր դիրքորոշումը:

1. Ընկերության դիրքորոշման 1-ին կետի մասով հայտնում եմ, որ «Սպանդարտացման և չափագիտության ազգային մարմին» փակ բաժնետիրական ընկերության կողմից չի ընդունվել ընկերության կողմից 2021 թվականի մայիս ամսին մատուցված ծառայությունների արդյունքը: Պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված բացասական եզրակացությունը վերաբերում է բացառապես ընկերության կողմից ներկայացված հանձնման-ընդունման N 3 արձանագրությանը, համաձայն որի հանձնման-ընդունման առարկա է հանդիսանում ընկերության կողմից 01.05.2021-31.05.2021թթ ընկած ժամանակահատվածում մատուցված ծառայությունները: Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ անհրաժեշտություն չկա անդրադառնալ ապրիլ ամսվա ընթացքում ընկերության կողմից մատուցված ծառայությունների պատշաճ մատուցված լինելուն կամ չլինելուն:

2. Ընկերության դիրքորոշման 2-րդ կետում տեղ գտած պանդումների վերաբերյալ հայտնում եմ, որ.

1) Ընկերության աշխատակցի կողմից ոգելից խմիչք օգտագործելու փաստն արդեն իսկ ընդունում է ընկերությունը, իսկ այդ ընթացքում տվյալ աշխատակցի կողմից անվայել պահվածքին ականատես են եղել, ոչ միայն մեր ընկերության աշխատակիցները, այլ նաև ընկերության տնօրենի տեղակալ Ն. Փիլոյանը, ով ժամանելով մեր ընկերություն ականատես է եղել նաև այն հանգամանքին, որ տեղում է միայն մեկ պահնորդ, այն էլ խմիչքի ազդեցության ներքո: Հետևաբար այդ փաստի ժխտումը, մեղմ ասած անհիմն է: Պահնորդների կողմից աշխատանքի վայրը լքելու բազմակի փաստերի վերաբերյալ առկա է նաև պատասխանատու ստորաբաժանման աշխատակից Տ. Քալաշյանի զեկուցագիրը (գործում առկա է), ինչպես նաև տեսաձայնագրությունները (կցվում է):

2) Ընկերության կողմից վկայակոչել է «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերության և «Պահապան 1» ՍՊ ընկերության միջև 2021 թվականի փետրվարի 26-ին կնքված պայմանագրի 2.1.2 կետի «ա» ենթակետը, որ սահմանում է, որ Պատվիրատուն իրավունք ունի չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրի համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ժամկետ: Սակայն ընկերությունը չի նշում, որ դա Պատվիրատու կողմի իրավունքն է, այլ ոչ պարտավորությունը, ավելին՝ նույն կետի «բ» պարբերությունը որպես այլընտրանք թույլ է տալիս Պատվիրատու կողմին հրաժարվել պայմանագիրը կատարելուց: Բացի վերոգրյալը պետք է հաշվի առնել, որ տվյալ պարագայում, ելնելով ծառայության տեսակից, հնարավոր չէ այլևս այն շտկել, քանի որ սա շարունակական ծառայություն է և կոնկրետ վերջնարդյունք այն չի ենթադրում:

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք նշել, որ Ընկերության կողմից ներկայացված դիրքորոշմամբ ներկայացված պնդումները հիմնազուրկ են:»:

3. <u>«Պահապան 1» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 16.06.2021թ.-ին գրությամբ դիմել է «Պահապան 1» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.06.2021թ.-ի թիվ 26/26-1/9732-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել 1 հրավիրված նիստին՝ ներկայացնելով գրավոր դիրքորոշում:

Մասնակիցը 18.06.2021թ.-ին ներկայացրած թիվ Պ1-020 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով թիվ ՍՅ-ԼՕ-2021/160 ընթացակարգի նախաձեռնման համար հիմք հանդիսացած փաստաթղթերը, գտնում ենք, որ նախաձեռնումը հիմնազուրկ է, իսկ նախաձեռնված ընթացակարգը՝ ենթակա մերժման հետևյալ պատճառներով՝

<<Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին>> ՓԲԸ-ի և <<Պահապան1>> ՍՊԸ-ի միջև 26.02.2021թ. կնքվել է N <<ՍՉԱՄ-ԳՀԾՁԲ-21/1>>

ծածկագրով պայմանագիրը, որի տեխնիկական բնութագրի համաձայն <<Պահապան1>> ՍՊԸ-ն պարտավորվել է <<Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին>> ՓԲԸ-ում իրականացնելու պահնորդական ծառայություն: <<Պահապան1>> ՍՊԸ-ի ղեկավարության կողմից սիստեմատիկաբար ամենօրյա ստուգում է իրականացվել ծառայության մատուցման որակի նկատմամբ: Պայմանագրի կնքման օրվանից մինչև այն 03.06.2021թ. <<Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին>> ՓԲԸ-ի կողմից միակողմանի լուծելը արձանագրվել է ծառայության մատուցման կարգի խախտման ընդհամենը երկու դեպք՝

1. 2021թ. ապրիլ ամսվա ընթացքում մեր կողմից 1 անգամ արձանագրվել է, որ պահնորդ Ժան Մալխասյանը ցերեկվա ընթացքում մի քանի ժամով բացակայել է պահակակետից: Անցկացված ծառայողական քննությամբ պարզվել է, որ Ժան Մալխասյանը հիվանդ հորը տարել է բուժ.զննման: Ժ.Մալխասյանը բացատրություն է տվել, որ ցերեկային բացակայության համար թույտվություն է վերցրել <<Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին>> ՓԲԸ-ի փոխտնօրեն Տիգրան Քալաշյանից: Այնուամենայնիվ մեր կողմից Ժան Մալխասյանին հայտարարվել է խիստ նկատողություն, այն բանի համար, որ բացակայության համար տեղյակ չի պահել <<Պահապան1>> ՍՊԸ-ի ղեկավարությանը (հրամանի պատճենը կցվում է):

2. 2021թ. մայիսի 13-ին <<Պահապան1>> ՍՊԸ-ի տնօրենի տեղակալ Ն.Փիլոյանը պահնորդ Արմեն Մարտիրոսյանի բերանից զգացել է ոգելից խմիչքի հոտ: Նա անմիջապես փոխարինվել է այլ պահնորդով, իսկ ոգելից խմիչք օգտագործած վիճակում աշխատավայրում գտնվելու համար Ա.Մարտիրոսյանը հենց նույն օրը ազատվել է աշխատանքից (հրամանի պատճենը կցվում է):

Հիշյալ 2 հրամանների օրինակը ուղարկվել է <<Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին>> ՓԲԸ-ի տնօրենին:

Նշված 2 դեպքերից բացի պահնորդների կողմից ծառայության մատուցման այլ խախտումներ ոչ <<Պահապան1>> ՍՊԸ-ի ղեկավարության, ոչ էլ <<Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին>> ՓԲԸ-ի ղեկավարության կողմից չեն արձանագրվել, այնինչ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին գրության մեջ անհիմն մտացածին նշվել է, որ ոչ սթափ աշխատանքի ներկայանալը եզակի դեպք չի եղել (համենայնդեպս իրենց ծանուցման մեջ դեպքը նշված է հոգնակի թվով), պահնորդները <<դրսևորել են անվայել և անհարգալից պահվածք կազմակերպության աշխատակիցների ներկայությամբ,

պահնորդները պատշաճ չեն ներկայանում ծառայության, մասնավորապես՝ վերջիններիս կողմից խախտվել են համազգեստի կրման կանոնները, ինչի մասին տեղեկացվել է <<Պահապան1>> ՍՊԸ-ի ղեկավար կազմին>>: Նման մեղադրանքը բացահայտ ապատեղեկատվություն է, քանի որ ոչ սթափ վիճակում աշխատանքի ներկայանալու ընդհամենը 1 դեպք է արձանագրվել, կազմակերպության աշխատակիցների ներկայությամբ անվայել և անհարգալից պահվածք դրսևորելու, համազգեստի կրման կանոնների խախտման դեպքեր չեն արձանագրվել, ՍՊԸ-ի ղեկավար կազմին, մասնավորապես ինձ ոչ գրավոր, ոչ էլ բանավոր որևէ ահազանգ չի եղել:

Սա հարցի փաստական կողմը, այժմ անցնենք իրավական կողմին:

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցման մեջ <<Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին>> ՓԲԸ-ի տնօրենի ժ/պ-ն, որպես պայմանագիրը միակողմանի լուծելու հիմք, նշել է վերը նշված պայմանագրի 2.1.3 կետը, մոռանալով պատշաճ ուշադրություն դարձնելու նույն պայմանագրի 2.1.2 և 2.2.1 կետերի պահանջներին:

Պայմանագրի 2.1.2 կետի <<ա>> ենթակետի համաձայն՝ <<Պատվիրատուն իրավունք ունի չնդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհապույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը>>:

Պայմանագիրի 2.2.1 կետի համաձայն՝ <<Պատվիրատուն պարտավոր է քննարկել և ընդունել տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին>>:

Պայմանագրում հիշյալ կետերի առկայության պայմաններում <<Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին>> ՓԲԸ-ի տնօրինությունը որևէ անգամ գրավոր չի տեղեկացրել ծառայությունների մատուցման որևէ թերության մասին, այդ թերությունները (եթե այդպիսիք կան) վերացնելու նկատառումով: Եթե նման ծանուցում գոյություն ունենար, ապա <<Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին>> ՓԲԸ-ի տնօրինությունը մեծագույն հաճույքով հիմքերի հետ կներկայացներ Ձեզ, այլ ոչ թե դրսևորելով խիստ սուբյեկտիվ և տենդենցիոզ մոտեցում, հորինելով մտացածին խախտումներ, փորձ կկատարեր շուրջ 300 պահնորդ ունեցող կազմակերպությանը կանգնեցնելու Գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու վկանգի առաջ: Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով, որ <<Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին>> ՓԲԸ-ն N <<ՍՉԱՄ-ԳՀԾՁԲ-21/1>> ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծել է նշված պայմանագրի 2.1.2 և 2.2.1 կետերի պահանջների կոպտագույն խախտումներով, խնդրում ենք հիշյալ ծածկագրով ընթացակարգը մերժել:»:

Ելնելով վերոգրյալից՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է նախաձեռնված ընթացակարգը մերժել:

Մասնակիցը 25.06.2021թ.-ին ներկայացրած թիվ Պ1-021 գրությամբ հավելել է նաև հետևյալը.

«Ի լրումն Թիվ ՍՅ-ԼՕ-2021/160 ընթացակարգի վերաբերյալ մեր 18.06.2021թ. դիրքորոշմանը հայտնում ենք, որ հիշյալ դիրքորոշմամբ հիմանվորել ենք N <<ՍՉԱՄ-ԳՀԾՁԲ-21/1>> ծածկագրով պայմանագրի <<Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին>> ՓԲԸ-ի կողմից միակողմանի լուծելու վերաբերյալ որոշումը հիմնազուրկ և անօրինական լինելը:

Դիրքորոշման մեջ հիմնական շեշտը դրվել է <<Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին>> ՓԲԸ-ի կողմից հիշյալ պայմանագրի 2.1.2 և 2.2.1 կետերի պահանջների խախտման վրա, որը կրկին պնդում ենք:

Ընթացակարգի 24.06.2021թ, քննության ընթացքում Ձեր կողմից հարցադրում է կատարվել Արմեն Մարտիրոսյանի կողմից ոգելից խմիչք գործածելու և Ժան Մալխասյանի կողմից աշխատանքային ժամին աշխատավայրից բացակայելու փաստերը հայտնաբերվելու վերաբերյալ: Մեր կողմից այդ հարցը հատուկ ուսումնասիրության է ենթարկվել, մեկ անգամ ևս ուսումանսիրվել է ծառայողական քննության նյութերը, որից պարզվել է հետևյալը՝

1. Նախ ՍՊԸ-ի կողմից պահնորդական ծառայություն մատուցվող օբյեկտներում ամենօրյա ռեժիմով կատարվում են պահնորդական ծառայության իրականացման որակի հանկարծակի, տարբեր ժամերի ստուգումներ, ինչպես ՍՊԸ-ի տնօրինության, այնպես էլ հատուկ այդ նպատակով ընդունված աշխատակիցների կողմից: Կոնկրետ <<Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին>> ՓԲԸ-ի պահնորդների գործունեության ստուգման պարտականությունը դրված է ՍՊԸ-ի փոխտնօրեն Ն.Փիլոյանի վրա, որի կողմից էլ հայտնաբերվել է պահնորդ Ժան Մալխասյանի մի քանի ժամով բացակայությունը և Արմեն Մարտիրոսյանի կողմից աշխատանքի վայրում ոչ սթափ վիճակում գտնվելը: <<Ստանդարտացման և

չափագիտության ազգային մարմին>> ՓԲԸ-ի ղեկավարությունը այդ մասին իմացել է Ն.Փիլոյանից, որը ՓԲԸ-ի ղեկավարությանը տեղյակ պահելով Արմեն Մարտիրոսյանին անմիջապես փոխարինել է մեկ այլ պահնորդով: Սա արձանագրված փաստ է, որը այլ մեկնաբանության անհրաժեշտություն չունի: Կից ուղարկվում է Ն.Փիլոյանի զեկուցագիրը և պահնորդ Ա.Մարտիրոսյանի բացատրությունը: Այնպես որ անհիմն է ՓԲԸ-ի տնօրենի հայտնածը և 24.06.2021թ. նիստում քննարկվածը, թե նշված խախտումները հայտնաբերվել են իրենց կողմից:

Ժան Մալխասյանի բացակայությունը ևս հայտնաբերվել է Ն. Փիլոյանի կողմից: Ճիշտ է, ծառայողական քննության ընթացքում պարզվել է, որ նա աշխատանքից բացակայել է ՓԲԸ-ի փոխտնօրեն Տիգրան Քալաշյանի գիտությամբ, սակայն այնուամենայնիվ նրան հայտարարվել է խիստ նկատողություն այն բանի համար, որ բացակայության մասին տեղյակ չի պահել <<Պահապան1>> ՍՊԸ-ի ղեկավարությանը:

2. Ընթացակարգի քննության ընթացքում Ձեր կողմից պահանջվել է պարզաբանել, թե պայմանագրի կատարման արդյունքների վերաբերյալ <<Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին>> ՓԲԸ-ի ղեկավարության 07.06.2021թ. կազմած N3 եզրակացությունը երբ է ուղարկվել մեզ:

Դրա վերաբերյալ հայտնում ենք, որ, ինչպես ամեն ամսվա սկզբին, այնպես էլ հունիս ամսվա սկզբին <<Պահապան1>> ՍՊԸ-ից <<Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին>> ՓԲԸ-ը է ուղարկվել հարկային հաշիվ, պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձման-ընդունման արձանագրություն և պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ ակտ, որպեսզի ՓԲԸ-ն մայիս ամսվա ծառայությունների մատուցման գումարը փոխանցի <<Պահապան1>> ՍՊԸ-ին: Մինչև հունիսի 8-ը ներառյալ ՍՊԸ-ի պահնորդները ծառայություն են մատուցել <<Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին>> ՓԲԸ-ում, տեղյակ չլինելով, որ դեռևս հունիսի 3-ից ՓԲԸ-ն ինքնագլուխ միակողմանի լուծել է պայմանագիրը: Եթե <<Պահապան1>> ՍՊԸ-ի տնօրինությունը տեղյակ լիներ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին, բնականաբար սկսած հունիսի 3-ից պահնորդներին չեր ուղարկի ՓԲԸ ծառայության: Այն, որ ոչ <<Պահապան1>> ՍՊԸ-ի ղեկավարությունը և ոչ էլ պահնորդները չեն իմացել պայմանագիրը միակողմանի լուծված լինելու մասին կվկայեն ինչպես ՓԲԸ-ի տեսախցիկների տեսագրությունները, այնպես էլ պահնորդների ընդունման-հանձման մատյանները: Կարծում ենք, որ ՓԲԸ-ի տնօրինությունը կդրսևորի պատշաճ ազնվություն և

չի հերքի, մինչև հուլիսի 8-ը <<Պահապան1>> ՍՊԸ-ի կողմից պահնորդական ծառայություն իրականացրած լինելու փաստը: 07.06.2021թ. կազմված N3 եզրակացությունը <<Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին>> ՓԲԸ-ի կողմից մեզ է ուղարկվել 09.06.2021թ. N ՍՉԱՄ-633 գրությամբ, որի հետ ուղարկվել է նաև պատասխանատու ստորաբաժանման կողմից տրված բացասական եզրակացության և զեկուցագրի պատճենը, որը ստացել ենք հունիսի 11-ն, նշված փաստաթղթերը կից ուղարկվում են Ձեզ: N 3 եզրակացության և Տ. Քալաշյանի զեկուցագրում տեղ են գտել բացահայտ սուտ, չափազանցեցված տեղեկատվություններ: Մասնավորապես նշված է, որ բազմիցս նկատվել են 1 պահնորդի տևական ժամանակով բացակայություններ: Սակայն բացի Ժան Մալխասյանի բացակայությունը (հայտաբերված մեր կողմից), այլ բացակայություններ չեն արձանագրվել, համենայնդեպս ինձ որպես տնօրենի, պայմանգրի Կողմի որևէ բանավոր կամ գրավոր ահազանգ չի ուղարկվել: Սուտ է նաև նշված փաստաթղթերում պատճառաբանվածը, թե պահնորդները (հոգնակի թվով) աշխատանքի են ներկայացել ոգելից խմիչքի ազդեցության ներքո: Կրկնում ենք, որ Արմեն Մարտիրոսյանի դեպքից բացի, նման այլ դեպքեր չեն արձանագրվել: Սուտ է նաև նշված փաստաթղթերում հիշատակվածը, թե պահնորդների կողմից խախտվում են համազգեստի կրման կանոնները: Նման փաստ մեր ՍՊԸ-ի ստուգողների կողմից երբևէ չի արձանագրվել, իսկ ՓԲԸ-ի տնօրինության կողմից երբևէ գրավոր կամ բանավոր ահազանգ չեմ ստացել դրա վերաբերյալ:

Վերոգրյալը վկայում է, որ <<Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին>> ՓԲԸ-ի տնօրինությունը միտումնավոր ներկայացնելով չափազանցեցված և խեղաթյուրված տվյալներ ինչ-ինչ դրդապատճառներով միակողմանի կամայական, առանց մեզ գրավոր տեղյակ պահելու լուծել է պայմանագիրը, հրաժարվելով ծառայությունների մատուցման հունիս ամսվա վճարումները կատարելուց: Ընդ որում N3 եզրակացությունը մեզ ուղարկել են ոչ թե ի գիտություն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին, այլ որպես հիմք հունիս ամսվա ծառայությունների մատուցման դիմաց վճարումները չկատարելը արդարացնելու համար: Մեզ մնում է ենթադրել միայն, որ այս ամբողջը կատարվել է մեր պահնորդների սկզբունքայնության, իրենց անմիջական պարտականություններին օբյեկտիվ մոտենալու պատճառով, որոնք հրաժարվել են կատարելու տնօրենի և տեղակալների կամայական պահանջները, մասնավորապես շենքից դուրս իրենց ավտոմեքենաների համար կայանատեղիներ պահելու հարցում, ինչպես նաև 1-ին հարկից մինչև տարբեր

հարկերում գտնվող իրենց աշխատասենյակներ ուղեկցելու պահանջի և այլ հարցերում, առանց գիտակցելու, որ իրենց նշված քայլով վտանգի տակ են դնում 300-ից ավելի պահնորդներ ունեցող <<Պահապան1>> ՍՊԸ-ի հետագա գործունեությունը:»:

4. <u>ՍՑ-LO-2021/160 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Պահապան 1» ՍՊԸ-ի միջև 26.02.2021թ.-ին կնքվել է թիվ «ՍՉԱՄ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի կարիքների համար անվտանգության և պահնորդային ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

iii. Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

iv. Պայմանագրի հավելված 1-ով սահմանվել է, որ ծառայությունների մատուցումը պետք է իրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կնքվելիք Համաձայնագրով սահմանված ժամկետներում:

v. Պատվիրատուի և «Պահապան 1» ՍՊԸ-ի միջև 30.04.2020թ.-ին կնքվել է թիվ «ՍՉԱՄ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 3 Համաձայնագիրը (այսուհետ նաև՝ Համաձայնագիր):

vi. Համաձայնագրի թիվ 1 հավելվածի՝ գնման-ժամանակացույցի համաձայն՝ ծառայությունների մատուցումը պետք է իրականացվի Համաձայնագրի կնքման պահից հաշված 8 (ութ) ամիսների ընթացքում:

vii. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 03.06.2021թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ ՍՉԱՄ-615 ծանուցման համաձայն՝ «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի և «Պահապան 1» ՍՊԸ-ի միջև 2021թ.-ի փետրվարի 26-ին կնքված թիվ «ՍՉԱՄ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով պայմանագրի շրջանակներում «Պահապան 1» ՍՊԸ-ն ստանձնել է պարտավորություն մատուցելու անվտանգության և պահնորդային ծառայություններ՝ համաձայն պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներին համապատասխան, մասնավորապես՝

-ըստ տեխնիկական բնութագրի «Պահապան 1» ՍՊԸ-ն պարտավոր է 09:00-ից մինչև 18:00-ն ընկած ժամանակահատվածում ապահովել պահակակետում միաժամանակ երկու պահնորդների ներկայությունը, սակայն տվյալ պահանջը չի պահպանվում, բազմիցս պահակակետում ներկա է գտնվել միայն մեկ պահնորդ, որը ֆիքսկել է նաև տեսախցիկներով,

-պահնորդներն աշխատանքի են ներկայացել ոչ սթափ, դրսևորել են անվայել և անհարգալից պահվածք կազմակերպության աշխատակիցների ներկայությամբ, ինչի մասին տեղեկացվել է «Պահապան 1» ՍՊԸ-ի ղեկավար կազմին,

-պահնորդները պատշաճ չեն ներկայանում ծառայության, մասնավորոպես վերջիններիս կողմից խախտվել են համազգեստի կրման կանոնները:

Թիվ «ՍՉԱՄ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով պայմանագրի 2.1.3 կետով Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:

Հաշվի առնելով, որ «Պահապան 1» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները, «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ն միակողմանի լուծել է «Պահապան 1» ՍՊԸ-ի հետ 2021թ.-ի փետրվարի 26-ին կնքած թիվ «ՍՉԱՄ-ԳՀԾՁԲ-21/1» պայմանագիրը պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

viii. «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ 07.06.2021թ.-ին կազմված եզրակացության (այսուհետ նաև՝ Եզրակացություն) համաձայն՝ տրվել է բացասական եզրակացություն, քանի որ՝

-ըստ տեխնիկական բնութագրի «Պահապան 1» ՍՊԸ-ն պարտավոր է 09:00-ից մինչև 18:00-ն ընկած ժամանակահատվածում ապահովել պահակակետում միաժամանակ երկու պահնորդների ներկայությունը, սակայն տվյալ պահանջը չի պահպանվում, բազմիցս պահակակետում ներկա է գտնվել միայն մեկ պահնորդ, որը ֆիքսկել է նաև տեսախցիկներով,

-պահնորդներն աշխատանքի են ներկայացել ոչ սթափ, դրսևորել են անվայել և անհարգալից պահվածք կազմակերպության աշխատակիցների ներկայությամբ, ինչի մասին տեղեկացվել է «Պահապան 1» ՍՊԸ-ի ղեկավար կազմին,

-պահնորդները պատշաճ չեն ներկայանում ծառայության, մասնավորապես՝ վերջիններիս կողմից խախտվել են համազգեստի կրման կանոնները:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.06.2021թ.-ի թիվ 26/26-1/9732-2021 գրությամբ «Պահապան 1» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է

պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 110-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ եթե պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրվել է բացասական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը եզրակացությունը և իր կողմից չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով տրամադրում է պատվիրատուի ղեկավարին, որոնք վերջինս մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է պայմանագիր կնքած անձին:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի կարիքների համար անվտանգության և պահնորդային ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի 2.1.2 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի, եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով

պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՍՊԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի և «Պահապան 1» ՍՊԸ-ի միջև 26.02.2021թ.-ին կնքված թիվ «ՍՉԱՄ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով պետական գնման պայմանագրի հավելված 1-ով սահմանվել է, որ ծառայությունների մատուցումը պետք է իրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կնքված Համաձայնագրով սահմանված ժամկետներում: Պատվիրատուի և «Պահապան 1» ՍՊԸ-ի միջև 30.04.2021թ.-ին կնքվել է

թիվ «ՍՉԱՄ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 3 Համաձայնագիրը, որի թիվ 1 հավելվածի՝ գնման-ժամանակացույցի համաձայն՝ ծառայությունների մատուցումը պետք է իրականացվի Համաձայնագրի կնքման պահից հաշված 8 (ութ) ամիսների ընթացքում:

«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի և «Պահապան 1» ՍՊԸ-ի միջև 2021թ.-ի փետրվարի 26-ին կնքված թիվ «ՍՉԱՄ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով պայմանագրի շրջանակներում «Պահապան 1» ՍՊԸ-ն ստանձնել է պարտավորություն մատուցելու անվտանգության և պահնորդային ծառայություններ՝ համաձայն պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներին համապատասխան, մասնավորապես՝

-ըստ տեխնիկական բնութագրի «Պահապան 1» ՍՊԸ-ն պարտավոր է 09:00-ից մինչև 18:00-ն ընկած ժամանակահատվածում ապահովել պահակակետում միաժամանակ երկու պահնորդների ներկայությունը, սակայն տվյալ պահանջը չի պահպանվում, բազմիցս պահակակետում ներկա է գտնվել միայն մեկ պահնորդ, որը ֆիքսկել է նաև տեսախցիկներով,

-պահնորդներն աշխատանքի են ներկայացել ոչ սթափ, դրսևորել են անվայել և անհարգալից պահվածք կազմակերպության աշխատակիցների ներկայությամբ, ինչի մասին տեղեկացվել է «Պահապան 1» ՍՊԸ-ի ղեկավար կազմին,

-պահնորդները պատշաճ չեն ներկայանում ծառայության, մասնավորոպես վերջիններիս կողմից խախտվել են համազգեստի կրման կանոնները:

Թիվ «ՍՉԱՄ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով պայմանագրի 2.1.3 կետով Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:

Հաշվի առնելով, որ «Պահապան 1» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները, «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ն միակողմանի լուծել է «Պահապան 1» ՍՊԸ-ի հետ 2021թ.-ի փետրվարի 26-ին կնքած թիվ «ՍՉԱՄ-ԳՀԾՁԲ-21/1» պայմանագիրը պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով

սահմանված դրույթները www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 03.06.2021թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ ՍՉԱՄ-615 ծանուցումը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից խախտվել են Կարգի 110-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված դրույթները, մասնավորապես՝ Պատվիրատուն Պայմանագիրը լուծել է առանց իրավական հիմքի. Պայմանագրի լուծման օրը՝ 03.06.2021թ.-ին, Պատվիրատուն չի ունեցել պատշաճ կազմված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ եզրակացության, այլ այն կազմվել է միայն մի քանի օր անց՝ 07.06.2021թ.-ին: Ընդ որում, հարկ է նկատել, որ Եզրակացության և www.gnumner.am համացանցային կայքում 03.06.2021թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ ՍՉԱՄ-615 ծանուցման հիմքերը նույնանում են: Այլ կերպ ասած՝ Պայմանագիրը լուծվել է Եզրակացությամբ արձանագրված անհամապատասխանությունների հիմքով, որոնք, սակայն, ինչպես վերը նշվեց, կազմվել են ավելի ուշ, քանի պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց

հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Նշված իրավանորմի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից թույլ է տրվել Կարգի 110-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված դրույթների խախտում, որպիսի պայմաններում պայմանագրի միակողմանի լուծման մասին կազմված ծանուցումը ոչ իրավաչափ է:

Ուստի, վերոնշյալների հաշվառմամբ, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում

նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.06.2021թ.-ի թիվ 26/26-1/9732-2021 գրությամբ «Պահապան 1» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/160 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**